

սակցութիւնը՝ ան բանին տեր կ'ընեն խեղչ մարդը :

Ի ամբասողը ընկերութեան մէջ ու ըիշներուն ալ պատճառ կ'ըլլայ բամբասանքի . զորտերու ու ձարուներու կը նմանի , որոնց մէկը սկսածին պէս կը լուալու կամ ձրձռալու՝ ամէնքն ալ ետևէն կը սկսին : Ո՞ր խեղչին անունը բերան առնելու ըլլան՝ փետտած հաւ կը դարձնեն . ու հասարակօրէն աղէկ մարդկանց անունը կը ձամծըմուի . վասն զի ինչպէս թռունները պտուղին հասունը ու ամենէն ընտիրը կը կտցեն , բամբասողներուն սովորութիւնն ալ ասէ , աւելի աղէկ ու արդիւնաւոր մարդկանց վրայ գէշ խօսիլ : Ի՞նոր համար Ովչիէօ կարդինալը մէկուն վրայ բամբասանք լսելու որ ըլլար , կ'ուզէր ան մարդը տեսնել , Հարկաւ մեծ աղէկութիւններ պիտի ունենայ որ այդչափ կը բամբասուի , ըսելով : Ի ստուած մարդկանց լեզու տուեր է՝ մէկմէկու հետ կապակցութիւննին եւեցընելու համար . բամբասողը մարդիկ մէկմէկէ կը բաժնէ՝ մէջերնին խռովութիւն ձգելով :

Կ ատ անգամ բամբասողը՝ Ուրիշէն ասսնկ լսեցի կ'ըսէ . որպէս զի սուտ որ ելլէ ըսածը , կամ ծայրէն վնաս մը ելլելու ըլլայ , ինքը ազատի . բայց միշտ ինքն ալ պատմածին վրայ բան մը կ'եւեցընէ . ինչպէս ջուրը ինչ խողովակի մէջէն անցնի՝ անոր հոտը կ'առնէ , ասանկ ալ բամբասանքը բերնէ բերան անցնելով՝ ամենուն կը մէկ մէկ քիչ բան կ'առնէ : Ո՞էկը ան մարդուն վրայ կը նախանձի , կ'ուզէ անոր բաները վար զարնել , ինչ որ նախանձը կը թելազրէ՝ կ'աւելցընէ վրան . մէկալը ան մարդուն հետ ոխ ունի , ուրիշ կերպով ոխը չկը նար առնել , ինչ որ ոխը կը թելազրէ՝ կ'եւելցընէ վրան . ասանկով որչափ բերնէ բերան անցնի , այնչափ կը մեծնայ բամբասանքը :

Ի ամբասանքը ինչպէս որ տկարամութենէ և կամ չարասրտութենէ առաջ կուզայ , այսպէս ալ կամ մոքի տկարութեան կամ որտի չարութեան

նշան է . բայց աս տարբերութեամբ՝ որ չարասրտութեամբ բամբասողը իր կիրքըն ալ կը յայտնէ , ու իրեն ալ չարաչար կը վնասէ . մեղուի կը նմանի , որ ուրիշը խայթած ատենը , իր խայթոցը վերքին մէջը կը թողու , ու իր կեանքը կը կորսրնցընէ : Ի ամբասողին ըսածը ախորժելի ալ ըլլայ մարդկանց , ինքը միշտ ատելի է . մէկուն համար բամբասող է որ ըսես , ամէնքը կը խրտին անկէց . մնորդուս մեծ գովեստներուն մէկն է՝ բերանն ու ականջը գոյ ըլլալը բամբասանքի : Ի ամաստուններուն մէկը շատ անգամ իր բարեկամին սեղանը գտնուելով , ու կերակուրներուն գէշութենէն՝ ի զատ ամէն անգամուն բամբասանք լսելով , օր մը դարձաւ տանտիրոջը ըսաւ . Չոր հացով ուրիշներուն միաը ուտելէն ձանձրացայ :

\*

#### ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

4

Դ ա ս տ ա ր է լ ո ւ ս պ է ն պ է տ ե լ ա ծ պ ո ւ շ ո ւ ն ի ւ ն ի ւ ն է ր ը :

Դ ա ս տ ա ր է լ ս ի ր են արուեստ մը ընտրելու ատեն՝ ինցուան այն խեղչութեանն ալ կրնայ համարի՝ որ օրուան ոգեսպահիկը գտնելու համար ստիպուի ծառայական թշուառ վիճակին ետևէ ըլլալ :

Դ րաւ է որ ծառայութիւնն ալ մարդկային ընկերութեան ամենահարկաւոր բան մը սեպուած է ամէն ատեն , բայց կ'ըսեմ ձեզի , սիրեցեալք իմ , օր միայն վերջին և անհրաժեշտ հարկաւորութեան ատենը՝ ծառայութեան ծանր շղթայովը ինքզինքնիդ կապէք . ամէն արուեստի մէջ մարդս իր ջանքովը կը ընայ առաջ երթալ . քիչ մարդ եղած է , ըսեմ ամենեին , օր ծառայութեամբ փառաւորուած ըլլայ . վասն զի շատ ցած վիճակ ըլլալուն՝ կարծես թէ բարձրութեան փափաքն ալ և կամ յոյսը՝ չեն ունենար այնպիսիք : Եւ կը տես-

նենք որ հասարակ գործաւոր մը՝ որ հազիւ ինքինքը կրնայ պահել, ծառայ մը տեսնելու ատենը՝ որչափ ալ հագուած ու զարդարուած ըլլայ, չէ թէ միայն շնախանձիր՝ հապա նաև մաքովը կ'արհամարհէ ալ:

Ի այց ինչպէս որ վերը լսի, երբոր ստիպուիք ասով ձեր հացը գտնել, նայեցէք որ ջանքովնիդ կերպով մը վիճակին ցածութիւնը բարձրացընէք. մի մանաք, սիրելիք, թէ ամենուն համար է պատիւը, վասն զի ամենուն ձեռքն է ստանալ զայն:

Չեր անխոնջ և հաւատարիմ աշխատաիրութիւնը ցցուցէք ամենուն թէ բարձրագոյն վիճակի և փառաց արժանաւոր էիք դուք. միայն կարօտութիւնն եղաւ և խեղճութիւնը որ ստիպեց ըզձեզ ատոր ձեռք զարնելու: || Մտքերնիդ մի դնէք թէ ուրիշի հաճոյիցը գերի էք. թէ որ այսպիսի մատածմանքներով սըրտերնիդ կոտրելու ըլլաք, գիտցէք սիրելիք, որ անկիւ ետքը աշխատութեան մէջ պէտք եղած գործունէութիւնը չէք ունենար, և ձեր տեարց աչքէն կ'իյնաք: | Իրաւամբք զրուցուած է այն խօսքը թէ լաւ ծառայն լաւ տէր ալ կը գտնէ, և անոր սիրելի ըլլալով՝ կամաց կամաց ծառայութեան գժուարին ձամբովը, իր վիճակին խեղճութիւնը ոտքի տակ կ'առնու: Տեսած էք, որ գեակք, թէ ինչպէս թաւ կաղնույ մը շուքին տակ հասարակ խոտերն ալ լաւ և շուտ առաջ կուգան:

5

|| Այսուհետապէի նը աշակերտելու արքէն ի՞նչ պէտը լուսին պէտք է ընել:

Տղաք որ իրենց ուսման ընթացքը նոր լընցուցած, աշխարհի զբաղմնաց մէջ մտնել կը սկսին, ընդհանրապէս միջակայնոց որդիքը ըլլալով՝ առջի բերան հմուտ արուեստաւորի մը կ'աշակերտին. և բոլորովին նոր վիճակ մը ըլլալով այս տղոց համար, հարկ է որ զգուշութեան աս քանի մը կանոններս իմա-

նան: Հայրենի տան զուարձութիւնը և ընտանեաց մնութիւմ ընտանութիւնը կերպով մը կարծես թէ կը պահսի. վասն զի ալ հանգստեան ատենն անցաւ և աշխատութեան ժամանակը հասաւ: | Խիստ վարպետի մը կրնաք հանգիսկիլ, սիրելիք, որ սաստիկ պահանջմունքներովը ձեր սիրաը երբեմն երբեմն վշտացնէ. բայց համբերեցէք, զիսնալով որ ամէն վիճակի և ամէն արուեստի մէջ այսպիսի գժուարութիւններ առաջ կ'ելլեն, ինչպէս խեղճ ու մութխանութիւննապէս ալ արքունի պալատան մէջ. մտքերնիդ զրէք որ ուրիշ աշկերտութիւն ընելը գժուարին բան է, բայց աս ալ մի մոռնաք որ միայն համբերտութեամբ պատիւ և հարատութիւն պիտի վաստրիլիք. այս բանին հասնելու համար՝ պէտք է որ ձեր հաջոյիցը ամենևին մտիկ ընէք: | առ զիտցէք որ այս գժուարութիւնները որչափ ալ անստանելի երենան, այնչափ աւելի օգտակար են. կ'անցնին այն դասնութիւնները, և ապագայ երջանկութեամբը առջի քաշածնիդ բոլորովին կը մոռնաք:

|| ասն զի թէ որ ըլլաք նու՝ աշխատանէր և ձեր պարտուցը ստահպանութեանը մէջ ձիշդ, կը տեսնէք որ այն խիստ և անտանելի կարծուած վարպետը՝ իր առջի բնութիւնը բոլորովին փոխեր է: | Երբոր կը տեսնէք որ վրանիդ սէր կը ցուցընէ, ջանք ըրէք, սիրելիք, որ ձեր կողմաննէ ալ անոր սէրը օր օրուան վրայ աձեցընէք: | Կայեցէք որ անոր աշխատելուն ատենը դուք ալ աշխատիք, ու աշխատութեան կերպը գիտէք. վասն զի ամէն արուեստ՝ որչափ ալ չնշին կարծուի, ինչն իրեն գաղտնիքները ունի, որոնք զիտողը՝ շատ և լաւ առաջ կ'երթայ: | Հհասկըցած բաներնիդ նորէն հարցընելու ամենևին մի վախնաք. բարեկիրթ վարպետ մը աւելի կ'ուրախանայ ձեր հետաքրքրութեանը վրայ, քան եթէ կը նեղասրտի: | Խօսքերնուգ, ևս առաւել բռնած կերպերնուգ մէջ յայտնի ցցուցէք թէ կը մեծարէք զինքը. ասոնցմով իրեն սիրելի

Կ'ըլլաք ու ձեր արուեստին մէջ զիւրաւ  
կը յաջողիք :

Ա. ԹԵՂԻՄ

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## የኢትዮጵያውያንድ ከተማ

Ղաւքսան ԴՐ Ա ողթա մեծանուն բը-  
նագէտը ծնաւ Խոտալիայի Վրոմոյ քա-  
ղաքը՝ հշխանազուն ցեղէ 1745ին : Դի-  
տութեանց սկզբունքը իր քաղքին դրպ-  
րոցներուն մէջ սորվեցաւ , և այնչափ  
օգուտ քաղեց անոնցմէ որ պատանե-  
կութեան ատենէն սկսաւ Պոլէիին ,  
Պէքքարիային , Միալանցանիին և ու-  
րիշ երևելի գիտուններուն հետ թրդ-  
թակցութիւն ընել բնաբանութեան  
բարակ նիւթերու վրայ , ու ինքն ալ  
շատ նոր նոր գիւտեր ու գործիքներ  
հնարեց , մանաւանդ ելեքտրականու-  
թեան մէջ : Խրեն գլխաւոր կարծիքնե-  
րուն մէկն ալ աս էր՝ թէ փոթորիկնե-  
րուն ու կայծակներուն առջևն առնե-  
լու համար շատ օգտակար հնարք կ'ե-  
րևնայ բարձր տեղուանք կրակ վառելը :  
Խ կարծիքը ան ատենի բնագէտները  
մեծ բանի տեղ չըրին . բայց վերջի տա-  
րիներս Խաչակոյ և Խաթթէուչի բնա-  
գէտները փորձով նոյն կարծիքը հաս-  
տատեցին . որովհետեւ կը տեսնեն որ  
ածուխ կամ կիր շինելու գործարաններ  
շատ եղած տեղուանքը փոթորիկ խիստ  
քիչ կը պատահի . թէպէտ և ուրիշնե-  
րը կ'ըսեն որ նոյն տեղերուն քովերը  
ան պատճառաւ փոթորիկները աւելի  
շատ ու սաստիկ կ'ըստան :

Եւելի մեծ պարծանք է Աղթային  
մէկ ուրիշ յաղթանակը որ ըրաւ Պօլո-  
սիայի մէջ . Կավլանի անունով գիտուն  
մարդուն տունը զիստաւածով կերակուրի  
համար քանի մը մեռած գորտ պատ-  
րաստուած ըլլարով , երբոր անոնց զը-  
րուած տախտըկին քովի ելեքտրական  
մէքենան դարձուցին՝ տեսան որ գորտե-

ըլ սկսան շարժիլ ու ցատքըտել։ Այս  
բանիս վրայ Կալվանին զարմացած՝ նո-  
րէն նորէն փորձեց, ու սկսաւ ըսել թէ  
անշուշտ կենդանեաց ջղերուն մէջ ելեք-  
տրական հեղանիւթ մը կայ, ան է զա-  
նոնք շարժողը։ Կատ փիլիսոփանել-  
հետեցան աս սիսալ կարծիքին, և յօյս  
առին թէ գուցէ մեռած կենդանինե-  
րուն ալ կարենան ելեքտրականութը  
շարժմունք տալ։ Ի այս կամ աղէկ  
ձանչնալով բնութեան հաստատուն ո-  
րէնքները, ժպտեցաւ աս բանիս վրայ։  
շատ փորձեր ըրաւ ու հաստատեց թէ  
կենդանեաց մկանունքը ելեքտրակա-  
նութեան հաղորդիչ թելին չափ միայն  
ուժ ունին, և կենդանական ելեքտրա-  
կանութիւն ըսուածը սուտ բան է։ Այս  
ատեն տաք վէճ մը ելաւ երևելի բնա-  
գէտներու մէջ։ մէկ կողմանէ կոռուող-  
ներն էին հումանութ, Ա ասայլի ու  
բողը Պոլոնիացիք, մէկալ կողմանէ  
միայն Ա ոլթային գիտութիւնը։ ինը  
տարի քշելին ետքը՝ յաղթանակը Ա ոլ-  
թան րրաւ։

| ակ | ոլթային անունը անմահացը-  
նող գիւտը իրեն սիւնադն՝ է . | լրակց  
կ'ըսէ թէ | ոլթային սիւնակը մարդ-  
կային գիւտերուն մէջ ամենէն զարմա-  
նալին է , ինչուան նաև գիւտակէն ու  
շոգեշարժ մեքենաներէն ալ : — | չ գոր-  
ծիքը սիւնի ձեռով բան մըն է , պղնձէ ,  
զինկէ ու թրջած չուխայէ կըոր կըոր  
թիթեղներ իրարու վրայ շարած աս  
կարգով . պղինձ , զինկ , չուխայ : | թէ  
որ պղինձն ու զինկը յիսունական հատ  
ըլլան վրայէ վրայ՝ շատ զարմանալի ե-  
րեսյթներ կը տեսնուին . | Վիւնակին  
վերի ու վարի ծայրերը թէ որ մետաղէ-  
թել մը կպցընես , ու մի և նոյն ատե-  
նը երկու թելին ալ դպչիս , անանկ ե-  
լքտրական ցնոյումմը կը զգաս որ կար-  
ծես թէ | եյտեան մեծ անօթի մը դը-  
պար : | չ վ ոլթայի սիւնակին ուժովը  
ամենակարծր մետաղներն ալ ոչ միայն  
կը հալին , այլ նաև գոլորշի կը դառ-  
նան . ածուխր կրակի ակս կը վառի ա-